ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ

Վարչական ղեկավար՝ Նորայր Պողոսյան

Հեռ: 093 35 11 86

Մակերես՝ 27.07 կմ^2

Բնակչություն՝ 905

Ինդեքս՝ 2807

norayrpoghosyan86@gmail.com

Գյուղի բնակչության նախնիները 1828-30թթ գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառից: Գյուղը նախկինում ունեցել է Շիշթաբա, Շիշթափա, անվանումները: Մեծ Սեպասար է վերանվանվել 1946 թվականին: Գյուղում հիմնանորոգումից հետո գործում է Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, շրջակայքում պահպանվել են հին ամրոցի, բնակատեղիի մնացորդներ: 2004 թվականից սկսած «Դարի սուրբ» կոչվող տեղամասում պեղումներ է իրականացնում Շիրակի երկրագիտական թանգարանը: Այն պատկանում է «Կուր-արաքսյան» կոչվող մշակույթին: Հայտնաբերվել են տարածաշրջանում զուգահեռները չունեցող հետաքրքիր գտածոներ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց: